



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 դեկտեմբերի 2011թ.

N 1051-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՖՈՆԴՈՒՄ ԱՐՄԱՏԻ ՎՐԱ ԲՆԱՓԱՅՏԻ ԲԱՑԹՈՂՆՍԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԳՆԵՐԸ (ՄԵԿ ԽՈՐԱՆԱՐԴ ՄԵՏՐԻ ՀԱՄԱՐ) ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N 235 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ԾԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառային օրենսգրքի 6-րդ և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածներին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառային ֆոնդում արմատի վրա բնափայտի բացթողնման նվազագույն գները (մեկ խորանարդ մետրի համար)՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 18-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառային ֆոնդի հատումներից բնափայտի բացթողնման (իրացման) նվազագույն գները (մեկ խտացված խորանարդ մետրի համար) սահմանելու մասին» N 235 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունվարի 1-ից:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՖՈՆԴԻՄ ԱՐՄԱՏԻ ՎՐԱ
 ԲՆԱՓՈՅՏԻ ԲԱՑԹՈՂՆՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԳՆԵՐԸ (ՄԵԿ ԽՈՐԱՆԱՐԴ ՄԵՏՐԻ ՀԱՍԱՐ)**

դրամ (ներառյալ ԱԱՀ)

ԶԶ	Ծառատեսակների անվանումը	Ներքին շուկայի համար			Արտահանման համար		
		Խոշոր տրամագիծը 25սմ ավելի	Միջին տրամագիծը 13/24սմ	Փոքր տրամագիծը մինչև 12սմ	Խոշոր տրամագիծը 25սմ ավելի	Միջին տրամագիծը 13/24սմ	Փոքր տրամագիծը մինչև 12սմ
1	2	3	4	5	6	7	8
1.	Գործափայտ (խտացված խորանարդ մետր)						
	Ինքնամթերում (արմատի վրա)						
1)	Հաճարենի, թխկի, թեղի	10000	8000	6000	12000	9600	7200
2)	Կաղնի, հացենի, լորենի	15000	12000	10000	18000	14400	12000
3)	Բոխի	7000	5000	4000	8400	6000	4800
4)	Այլ ծառատեսակներ	պայմանագրային			պայմանագրային		
2	Վառելափայտ (պահեստային խորանարդ մետր)						
1)	Ինքնամթերում (թափուկից)		240			1500	
2)	Ինքնամթերում (արմատի վրա)		600			1500	

Ծանոթություն

- Ցանկում չնշված ծառատեսակների ինքնամթերումն իրականացվում է պայմանագրային գների հիման վրա, որը սահմանում է պետական լիազոր մարմինը:
- Քամետապալ գործափայտի իրացման գինը սահմանվում է տվյալ գործափայտի (ծառատեսակի) արժեքի 50 տոկոսի չափով:
- Հատումն իրականացվում է անտառային պետական ծառայության աշխատողների հսկողության ներքո, իսկ մինչև հատատեղը անտառային ճանապարհների նորոգումը կամ կառուցումը, ինչպես նաև այլ շինությունների կառուցումը կատարվում է անտառօգտագործողների (իրավաբանական անձանց) կողմից՝ նախագիծը համաձայնեցնելով «Արցախանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ:
- Գործափայտի, ինչպես նաև դրանից ստացված անտառանյութի (սղոցված, ճեղքված և այլ ձևի մշակված) արտահանումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքից իրականացվում է համապատասխան փաստաթղթի (անտառային տոմսի, սղոցանյութի ձեռքբերման և այլն) առկայության դեպքում՝ պետական լիազոր մարմնի թույլտվության հիման վրա:
- Վառելափայտի արտահանումն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքից իրականացվում է «Արցախանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից մասնաճյուղերին, անտառապետություններին ընթացիկ տարվա համար սահմանված լիմիտների ծավալի հիման վրա: Արտահանումը իրականացվում է միայն սույն հավելվածում վառելափայտի արտահանման համար սահմանված (թափուկի և արմատի վրա) սակագնի հիման վրա:
- Անտառօգտագործողները թափուկի տեսքով վառելափայտի մթերման դեպքում ազատվում են բնօգտագործման վճարից: